ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Հ. Վարդանյան

«31» 08 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզի

Վարդաբլուրի միջն. դպրոցի, 4-րդ դասարանի

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Վարդանյան Հայկուհի Գեղամի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022 - 2023 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Չորրորդ դասարանը բաղկացած է 9 աշակերտներից՝ 4 – ը տղաներ են, 5 – ը՝ աղջիկներ: Այն բազմանդամ մի կոլեկտիվ է, որում կան բնավորության և ընդունակությունների տարբեր դրսևորումներով օժտված երեխաներ: Ընդհանուր առմամբ կոլեկտիվը հաշտ է, սակայն պահանջվում է մեծ աշխատանք՝ դաստիարակության, կարգապահության, ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ու ուսումնադաստիարակչական աշխատանքները՝

Ուսուցման գործընթացն իր մեջ ներառում է նաև դաստիարակչական ֆունկցիա: Հետևողականորեն աշխատանք տանել աշակերտների աշխարհայացքի, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, էթիկական պատկերացումների ճիշտ զարգացման ուղղությամբ: Ուսուցումն առանց դրական որակների մշակման, անձի մեջ չի կարող ունենալ արդյունավետության ցանկալի չափեր, ուստի պետք է ուսուցչի, սովորողների հետ հաղորդակցման հատուկ միջոցներ՝ զրույցներ, դրական կերպարների օրինակներ, սովորողի իրավունքների և պարտականությունների ծանոթացում: Ակտիվորեն մասնակից դարձնել դպրոցի ներքին ծրագրերին:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Զրույցների և պատմական փաստերի միջոցով մոտիկից ծանոթացնել Հայաստանի քրիստոնեության ընդունմանը: Կարևորել այդ փաստը հայոց պահպանության գործում: Հայ ականավոր գործիչների կերպարների օգնությամբ երեխաների մեջ խորացնել հայ քրիստոնյա քաղաքացու ձևավորումը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Խթանել աշակերտներին ճանաչելու իրենց հակումներն ու հետաքրքրությունները արվեստի նկատմամբ: Օգնել ռեժիմ կազմել գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար, ինչ գրականություն կարդալ՝ ըստ ընտրած արվեստի ճյուղի:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ սերն է: Այն ձևավորելուն կնպաստեն արիության դասերը, որոնք կնվիրվեն պատերազմնե-րի, աշխատանքի, տիեզերքի հերոսների, նրանց կատարած գործերին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության հիմնական միջոցներից են ֆիզիկական վարժությունները, բնական ու հիգենիկ գործոնները: Անհրաժեշտ է հասու դարձնել դպրոցականին հատուկ կազմակերպված ու գիտակցաբար կատարվող շարժական վարժությունների կարևորությունը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության հիմքում դնել հանրությանը օգտակար լինելու գաղափարը, մտավոր և ֆիզիկական ուժի միացումից ինտելեկտուալ պոտենցիալ զարգացում, որակյալ աշխատանք կատարելու ձգտման ձևավորում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Էքսկուրսիաներ միջոցով ավելի մոտիկից ծանոթանալ բնության, բույսերի, ծառերի պրոբլեմներին, ձմեռող թռչուններին օգնություն, փողոցների աղտոտվածության վրա ուշադրություն դարձնել, ցանել և մշակել ծաղիկներ:

3.7 Դպրոց – ընտանիք կապը

Յուրաքանչյուր աշակերտի ծնողի հետ ծանոթանալ, իմանալ յուրաքանչյուր անհատականության մասին: Բացի ծնողական ժողովներից հանդիպել ծնողների հետ՝ աշակերտի նկատված անհաջողությունների, անկարգապահության շտկման նպատակով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուս / շ	Ուս. Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Ծանոթացնել COVID 19 համավարակին և «Գիտելիքի օր» թեմային	1.09.2022թ.	Դասղեկ
II	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները	8.09.2022թ.	Դասղեկ
III	ՀՀ անկախության 31 – րդ ամյակին նվիրված զրույց երգել, ասմունքել և պարել տոնին համապատասխան	15.09.2022թ.	Դասղեկ
IV	«Երաժշտության օր» ունկնդրել տարբեր երաժշտություններ	22.09.2022թ.	Դասղեկ
V	«Ուսուցչի օր» զրույց դպրոցի նշանակության, ուսուցչի ազգանվեր առաքելության մասին, երգել ուսուցչին նվիրված երգեր	29.09.2022թ.	Դասղեկ
VI	Շրջակա միջավայրի պահպանություն	6.10.2022թ.	Դասղեկ
VII	Դասարանական կանոնների կազմում, սենյակային ծաղիկների մշակում	13.10.2022թ.	Դասղեկ
VIII	Երեխաների կյանքի, զգացմունքների, առօրյայի, շրջապատի վերաբերյալ ստեղծագործությունների ընթերցում	20.10.2022թ.	Դասղեկ
IX	Զրույց բնության զրկում ճիշտ հանգստանալու, արևից և քամուց պաշտպանվելու մասին	10.11.2022թ.	Դասղեկ
X	Ծանոթանալ ընկերների երազանքներին, ձգտումներին: Օգնել նպատակին հասնել	17.11.2022թ.	Դասղեկ
XI	«Ոսկեհեր աշուն» թեմայի շրջանակներում կազմակերպել ինտեգրված դաս «Մայրենի» «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաների շնջանակներում «Ես աշունն եմ սիրում» թեմայով	24.11.2022թ.	Դասղեկ
XII	Զրույց երկրաշարժի՝ դրանից պաշտպանվելու մասին	1.12.2022թ.	Դասղեկ
XIII	Զրույց ճանապարհային ճիշտ երթևեկելու մասին	8.12.2022թ.	Դասղեկ
XIV	Հայոց գրերը, Մ. Մաշտոցի կենսագրությունը, կատարած աշխատանքները	15.12.2022թ.	Դասղեկ
XV	«Իմ համայնքը» թեմայով անցկացնել զրույց: Բացատրել «համայնք» հասկացությունը, մեր համայնքի պատմությունը	22.12.2022թ.	Դասղեկ
XVI	Զրույց Ամանորի պատմության, տոնակատարության, եղևնու՝ որպես տոնածառ դառնալու պատմության մասին	12.01.2023թ.	Դասղեկ
XVII	Զրույց ձմռանը սառնամանիքից պաշտպանվելու մասին	19.01.2023թ.	Դասղեկ
XVIII	«Ես» - ի մասին զրույցներ, ինքնաճանաչման, ինքնադրսևորման զարգացում	26.01.2023թ.	Դասղեկ
XIX	Հովհ. Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մանկագիր, հեքիաթագիր: Գիրք	2.02.2023թ.	Դասղեկ

	նվիրելու օր:Մայրենի լեզվի միջազգային օր	9.02.2023թ	Դասղեկ
XX	Ինչպես պաշտպանվել վարակիչ հիվանդություններից	16.02.2023թ.	Դասղեկ
XXI	Բնական աղետներ՝ արտակարգ իրավիճակներում ճիշտ դրսևորվելու և դրանից խուսափելու համար «Հրդեհային իրավիճակ»	23.02.2023թ.	Դասղեկ
XXII	Զրույց տոների մասին: Բացիկների պատրաստում՝ ընտանիքի անդամների շնորհավորելու համար	2.03.2023թ.	Դասղեկ
XXIII	Զրույց շրջապատում ճիշտ դրսևորվելու, հարգալից վերաբերմունք ունենալու, դիմացինի հետ հաղորդակցվելու մասին	9.03.2023թ.	Դասղեկ
XXIV	«Կենդանիները մեր բարեկամներն են » շարադրությունների ընթերցում	16.03.2023թ.	Դասղեկ
XXV	Բնության փոփոխությունների դիտարկում «Գարունն արթնացել է»	23.03.2023թ.	Դասղեկ
XXVI	Առողջության պահպանման կարևորությունը, ֆիզիկական կախվածություն, ճիշտ սնունդ	6.04.2023թ.	Դասղեկ
XXVII	Տարածքի մաքրությունը, բնության անաղարտությունը, բարիքների խնայողաբար օգտագործումը կարևորելու նպատակով անցկացնել զրույց «Ինչ է մեզ շրջապատում»	13.04.2023թ.	Դասղեկ
XXVIII	Համակարգիչն օգնում՝ թե վնասում: Բացատրեմ համակարգչի լավ ու վատ կողմերը	20.04.2023թ.	Դասղեկ
XXIX	«Իմ տեղն ընտանիքում» շարադրության միջոցով ամրապնդել ընտանիքը սիրելու զգացմունքը	27.04.2023թ.	Դասղեկ
XXX	«Հայաստանը մեր հայրենիքն է» թեմայի մասին զրույցնոր, երգերի կատարում	4.05.2023թ.	Դասղեկ
XXXI	Զրույց հեքիաթների, դրանց ստեղծման, բարի և չար հերոսների, նրանց արարքների մասին	11.05.2023թ.	Դասղեկ
XXXII	Ձեռք բերած գիտելիքների, որակների ամրապնդում, կատարած աշխատանքների քննարկում	18.05.2023թ.	Դասղեկ
XXXIII	Հրաժեշտի միջոցառում	25.05.2023թ.	Դասղեկ
XXXIV	Առջևում ամառ է, ամառվա ընթացքում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանձնարարականներ, առաջարկություններ		